2002, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (131)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

*Քեզ միայնոյ Մօր եւ Կուսի մաղթեմք հայցելով ի քէն,*
*բարեխօսեա անդադար առ Որդին քո եւ Աստուած մեր,*
*փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:*

*Շարական*

Աղոթք դարձած անզուգական այս շարականի բառերով ենք հաճախ դիմում Աստվածամայր Ս. Կույս Մարիամին՝ մեր բարեխոս ու պահապան մորը՝ բարեխոսելու մեզ համար իր Որդու եւ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մոտ՝ փրկելու մեղավորներիս փորձություններից ու բոլոր վտանգներից: Մի ընտրյալ անոթի, ում Քրիստոսի եկեղեցին բազմաթիվ տոներ է նվիրել՝ աղամորդիներիս ուսուցանելու, կրթելու, դաստիարակելու եւ ճշմարիտ կենսակերպը ցույց տալու համար: Իսկ այդ տոների մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի Ս. Աստվածածնի վերափոխման տոնը: Այն Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից չորրորդն է:

Հայերիս համար նվիրական այս տոնը սովորաբար նշվում է ամեն տարի օգոստոսի 15-ին (այս տարի՝ օգոստոսի 18-ին) մերձակա կիրակի օրը: Այն Տիրամորը նվիրված տոներից ամենահինն է:

Թեեւ կցկտուր են Տիրամոր մասին տեղեկությունները Աստվածաշունչ մատյանում, բայց դրանք եւս բավարար են մեզ համար պատկերացում կազմելու Հիսուսի մոր՝ Ս. Կույս Մարիամի մասին: Նրա կյանքի մանրամասնությունները, ինչպես նաեւ վերափոխման պատմությունը պահպանվել եւ մեզ են փոխանցվել եկեղեցու Սրբազան Ավանդության շնորհիվ:

Ինչպես գիտենք Ս. Ավետարանից, Քրիստոսը խաչի վրա կրած Իր չարչարանքների ժամանակ անգամ չի մոռանում Իր մորն ու նրան խնամատարության է հանձնում Հովհաննես աստվածաբան ավետարանչին (տես Հովհ. ԺԹ 26-27): Շուրջ 15 տարի Աստվածամայրը հաստատվում է աղոթքների ու պահքի մեջ, հաճախ այցելում իր սիրասուն Որդու գերեզմանին ու անդադար աղոթում: Այդ այցելություններից մեկի ժամանակ էլ Տիրամորն է հայտնվում Գաբրիել հրեշտակապետն ու ավետում նրա՝ երկրային աշխարհից Վերին Երուսաղեմ վերափոխվելու լուրը: Աստվածածինն էլ այս բարի լուրը հայտնում է իր ազգականներին ու մյուս բոլոր քրիստոնյաներին՝ պատվիրելով, որ իրեն թաղեն Գեթսեմանիի ձորակում: Այդ ժամանակ քարոզությունից վերադառնում է Հովհաննես ավետարանիչը, եւ Աստվածամայրը նրան էլ հայտնում է ամեն ինչ եւ պատվիրում, որ առաքյալը Ս. Պատարագ մատուցի, որպեսզի ինքը վերջին անգամ Ս. Հաղորդություն ընդունի: Հաղորդվելուց հետո Աստվածամայրը գնում է վերնատուն: Մինչ առաքյալները լաց էին լինում, Հովհաննեսը վերցնում է մի տախտակ ու տալիս Աստվածածնին եւ խնդրում, որ նա իր պատկերը դրոշմի դրա վրա: Տիրամայրը վերցնում է տախտակը, խաչակնքում եւ դնում երեսին, այնուհետեւ թրջում այն իր արցունքներով եւ խնդրում Աստծուց, որ այդ տախտակի միջոցով մարդիկ բժշկվեն իրենց ախտերից եւ զանազան հիվանդություններից:



Երբ առաքյալները շրջապատում են մահիճը, ուր պառկած էր Աստծո մայրը, աննկարագրելի մի լույս է հանկարծ երեւում: Ներկաները սարսափում են, իսկ սենյակի վերեւում հայտնվում է Ինքը՝ Քրիստոսը՝ հրեշտակների զորքերով: Տեսնելով Հիսուսին՝ Աստվածամայրն ավանդում է հոգին: Աստվածամոր երկրային կյանքի վախճանը եկեղեցին «ննջում» եւ ոչ թե «մահ» բառով է որակում՝ հասկանալի դարձնելու համար նրա՝ երկինք փոխադրված լինելը:

Երբ հանդիսավոր թափորը շարժվում է դեպի Գեթսեմանի, հանկարծ ներկաների գլխավերեւում լուսավոր եւ պսակաձեւ մի ամպ է գոյանում՝ առաջնորդելով թափորը: Երուսաղեմի անհավատ բնակիչները չարացած գնում եւ ամեն ինչ հայտնում են հրեա քահանայապետներին եւ դպիրներին: Վերջիններս էլ միջոցներ չեն խնայում թափորը ցրելու համար: Սակայն պսակաձեւ ամպը ծածկում է նրանց չար մտադրությունը՝ պարսպի նման շրջապատելով նրանց: Շատերը կուրանում են, բայց վերստին գտնում իրենց մարմնավոր տեսողությունը, երբ զղջումով եւ ապաշխարությամբ դիպչում են Աստվածածնի մահճին:

Այդ օրը նաեւ մեկ այլ հրաշք է կատարվում: Մի հրեա քահանա, տեսնելով հանդիսավոր թափորը, մոտենում է դագաղին՝ այն տապալելու մտադրությամբ: Սակայն երբ դիպչում է դագաղին, հրեշտակն աններեւութաբար թրով կտրում է նրա երկու ձեռքերը: Ձեռքերը մնում են դագաղի վրա, իսկ քահանան ընկնում է եւ խորապես զղջում իր արածի համար: Պետրոս առաքյալն էլ, տեսնելով քահանայի զղջումը, բժշկում է նրան: Հետագայում այս քահանան դառնում է Քրիստոսի սիրո վարդապետության ջերմեռանդ տարածողներից մեկը:

Ս. Բարթողոմեոս առաքյալն այդ ժամանակ Երուսաղեմում չէր: Երբ վերադառնում եւ իմանում է կատարվածի մասին, շատ է տխրում, քանզի չէր կարողացել վերջին հրաժեշտը տալ Աստվածամորը: Մյուս առաքյալներից խնդրում է, որ գերեզմանը բացեն, որպեսզի վերջին անգամ հրաժեշտ տա նրան: Երբ առաքյալները բացում են գերեզմանը, այն դատարկ են գտնում: Այդ պահին երկնքից մի ձայն է լսվում, որն ասում է, թե Աստվածածնի մարմինը երկինք փոխադրվեց: Բայց ձայնը նաեւ պատվիրում է, որ Կույսի փայտի վրա դրոշմված պատկերը տան Բարթողոմեոսին՝ որպես մխիթարություն:

Ըստ Մովսես Խորենացու՝ Հայաստանի առաջին լուսավորիչն այն բերում է Հայաստան եւ զետեղում Անձեւացյաց գավառի Դարբնոց կոչված տեղում, ուր հետագայում, ի պատիվ Աստվածամոր, եկեղեցի եւ կուսանոց են հիմնադրվում:

*Շարունակությունը էջ 2*

### ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Արկադի Ղուկասյանին ԼՂՀ նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ

Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անունից շնորհավորական նամակ է հղել Արկադի Ղուկասյանին ԼՂ Հանրապետության նախագահի պաշտոնում վերընտրվելու առիթով: Նամակում ի մասնավորի ասվում է.

«ԼՂ Հանրապետության նախագահի ընտրությամբ Արցախի հերոսական ժողովուրդը վերստին հաստատեց ազատ ապրելու իր կամքը եւ իր պատրաստակամությունը՝ ընթանալու Արցախի պետականության զորացման, երկրի կայունության ամրապնդման եւ բարգավաճման ճանապարհով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսո խորանից աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Իր հանապազ օրհնության ներքո խաղաղ ու ապահով պահպանի հայոց Արցախ աշխարհը եւ աջակից ու առաջնորդ լինի Ձեզ՝ նախագահի բարձր ու պատասխանատու պաշտոնում՝ հանուն հավասավոր մեր ժողովրդի հայրենաշինական իղձերի իրականացման:

Թող Տերը պարգեւի Ձեզ քաջառողջություն, ուժ, կորով ու եռանդ»:

## Գարեգին Բ կաթողիկոսն ընդունեց «Ճապոնիա-Հայաստան բարեկամություն» միության անդամներին

Օգոստոսի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց «Ճապոնիա-Հայաստան բարեկամություն» միության անդամներին՝ միության նախագահ Նակաջիմա Հիդեհարուի գլխավորությամբ:

Շուրջ 15 տարի առաջ ստեղծված այս կազմակերպությունը նպատակ ունի ճապոնացի ժողովրդին ներկայացնել Հայաստանը, հայ ժողովրդին, նրա պատմությունը, մշակույթն ու լեզուն: Իսկ միության հայ անդամների ջանքերով ուսումնական այս տարվանից Հայաստանի հանրակրթական դպրոցներից մեկում ճապոներենը կարող է ուսուցանվել որպես օտար լեզու:

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով ժողովուրդների բարեկամությունը, նկատեց, որ Ճապոնիան այն եզակի երկրներից է, ուր չկա հայկական գաղթօջախ, ինչն էլ առավել գնահատելի է դարձնում միության առաքելությունը:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը հյուրերի խնդրանքով անդրադարձավ նաեւ հայ ժողովրդի կյանքում եկեղեցու ունեցած կարեւոր դերակատարությանը, ներկայացրեց Հայ եկեղեցու պատմությունը:

## Գարեգին Բ կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակված Խորեն աբեղա Հովհաննիսյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն օգոստոսի 7-ի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակել Տ. Խորեն աբղ. Հովհաննիսյանին, որը հրաժարականի դիմում ներկայացնելով՝ ինքնակամ լքել է հոգեւոր ծառայությունը եւ առանց հայրապետական արտոնության մեկնել արտասահման:

Կարգալույծ արված հոգեւորականն այլեւս դասվում է աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Նշան Հովհաննիսյան:

*Տես էջ 2*

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԸ

## ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԲԱՐԵՐԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ թիվ 8, 9, 11-14*

Անդրադառնանք Սուրբ Գրքի աստվածաշնչականության ներքին ապացույցներից վերջինին՝ Ս. Գրքի բարերար ազդեցությանը մարդու մտքի, հոգու եւ սրտի վրա, որը ճանաչվում եւ ի հայտ է գալիս ոչ այնքան բանականությամբ, որքան ներքին փորձառությամբ: Յուրաքանչյուր քրիստոնյա, ով ամեն օր Սուրբ Գիրքն ընթերցելու բարեպաշտ սովորությունն ունի եւ իր քիմքի վրա ճաշակել է նրա կենարար ազդեցությունը, կհաստատի այս ճշմարտությունը: Բանն այն է, որ Աստվածաշունչը, մյուս գրքերի նման, տեղեկությունների, գիտելիքի եւ իմաստության հավաքածու չէ, թեեւ պարունակում է այդ բոլորը, այլ այն «Աստծու զորությունն է՝ ի փրկություն բոլոր հավատացյալների» (Հռոմ. Ա 16): Նրա խոսքն օժտված է ներգործուն զորությամբ՝ ունակ բուժելու, մխիթարելու, իմաստնացնելու, մաքրագործելու եւ վերափոխելու մարդկանց հոգիները: Մեր անմահ հոգիները, ինչպես մարմինը, սնունդի կարիք ունեն, որը Աստծո խոսքն է: Մեր Տեր Հիսուս Քրիստոսը վկայում է. «Միայն հացով չի ապրի մարդ, այլ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից» (Մատթ. Դ 4): Աստծու խոսքը շնորհական զորություն է մեզ համար, եւ ինչպես հենց Ս. Գիրքն է վկայում, «մուրճ է», որ ջարդում է մեր քարեղեն սրտերը, «հուր է», որ այրում է մեր մեղսալից անմաքրությունը եւ ջերմացնում մեր անտարբեր սրտերը Երկնքի արքայության նկատմամբ, «ճրագ է», որ լույս է տալիս մութ տեղում եւ իր լույսով փարատում մեր կրքերը, մոլորությունները ու տգիտությունը, «սերմ է», որը հավատով ցանվելիս՝ աճում է մեր սրտերում եւ պտուղներ տալիս: Եվ վերջապես՝ «կյանքի» խոսք է, որ շնորհում է մեզ հավիտենական կյանք:

Այս շնորհական զորությունները բխում են ոչ միայն բառերի մեջ ամփոփված իմաստներից, այլ նախեւառաջ Աստծո խոսքի կենարար էությունից: «Կենդանի է Աստծու խոսքը, ազդու եւ ավելի հատու, քան ամեն մի երկսայրի սուր, եւ կտրում անցնում է մինչեւ ոգու եւ հոգու, հոդերի եւ ողնուծուծի բաժանման սահմանը, նա քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները» (Եբր. Դ 12): Այն մանավանդ ներգործուն է, երբ Ս. Գիրքը կարդում ենք պարզ հավատավոր սրտով կամ երբ կյանքի բազում հարվածների եւ նեղությունների հորձանուտում կարիք ունենք սփոփվելու, սրբագործվելու եւ իմաստնանալու: Աստծու խոսքի՝ մարդկային հոգու եւ մտքի վրա մաքրագործող, մխիթարող, խաղաղեցնող եւ իմաստնացնող ազդեցության մասին բազմիցս վկայել են եկեղեցու հայրերն ու վարդապետները: Հիշատակենք նրանցից մի քանիսի վկայությունները:

«Լսե՛ք, աղաչում եմ ձեզ, բոլոր կանչվածնե՛րդ. ձեռք բերեք հոգու բժշկության Գրքերը: Եթե չեք կամենում բոլոր գրքերը, ձեռք բերեք գոնե Նոր Կտակարանը, Գործք առաքելոցը, Ավետարանը՝ մեր մշտական դաստիարակներին: Թե վշտացել ես, կառչի՛ր դրանցից, ինչպես բալասանով լեցուն անոթի. եթե զրկվել ես ինչ-որ բանից կամ մերձավորիդ մահը, կորուստն ես տեսել, այդտեղի՛ց մխիթարություն գտիր քո դժբախտության մեջ: Կամ կառչելուց առավել՝ սրտիդ մեջ ընդունի՛ր եւ մտապահի՛ր...

Ո՛չ փառքի մեծությունը, ո՛չ իշխանության բարձրությունը, ո՛չ ընկերների ներկայությունը, ո՛չ էլ մարդկային որեւէ այլ բան ի զորու չեն ամոքելու վիշտն այնպես, ինչպես Աստվածաշնչի ընթերցանությունը: Ինչո՞ւ: Որովհետեւ սրանք երկրավոր եւ ժամանակավոր բաներ են, ուստի եւ նրանց սփոփանքն էլ վաղանցիկ է, իսկ Սուրբ Գրքի ընթերցանությունը զրույց է Աստծու հետ:

Սուրբ Գրքի չիմացությունն է բոլոր չարիքների [աղբյուրը]: Մենք պատերազմելու ենք գնում անզեն, հապա ինչպե՞ս պիտի փրկվենք: Դյուրին է փրկվել Աստվածաշնչով, իսկ առանց դրա անհնար է» (Ս. Հովհաննես Ոսկեբերան):

«Անհնար է, որ հոգին խաղաղության մեջ հանգրվանի առանց Տիրոջ օրենքը զոր ու գիշեր ուսանելու, քանզի այն գրված է Սուրբ Հոգու կողմից: Սուրբ Հոգին Գրքից անցնում է հոգու մեջ, եւ հոգին լցվում է քաղցրությամբ ու բավականությամբ եւ այլեւս չի ցանկանում սիրել երկրայինը, քանզի սերը



երկրայինի նկատմամբ ամայացնում է հոգին: Իսկ նման վիճակում հոգին վհատվում է ու վայրենանում:

Տեսնելով, որ հոգին չի հաղորդակցվում Աստծու հետ՝ թշնամին սասանում է այն եւ չհանդիպելով դիմադրության՝ նվաճում է միտքը՝ հոգին մի չար մտածումից մյուսին մղելով: Այդպիսով՝ հոգին ամբողջ օրն անցկացնում է այս թոհուբոհի մեջ եւ ի զորու չի լինում հստակորեն հայելու Աստծուն» (Սիլուան վանական):

«Եկե՛ք եւ հաղորդվե՛ք անգերազանցելի եւ իր նմանը չունեցող իմաստությանը, սովորե՛ք Աստծու խոսքից, ճանաչե՛ք հավիտենական Թագավորին: Աստծու խոսքն իր զորությամբ թափանցում է մեր հոգիների մեջ: Օ՜, ինչպիսի՜ խաղաղության բաներ է քեզ համար, մարտնչող հոգի: Ինչպիսի՜ միջոց է կրքերի անագորույն պոռթկումները սանձահարելու համար: Այս զորությունը մեզ չի դարձնում ո՛չ բանաստեղծ, ո՛չ իմաստուն, ո՛չ էլ անվանի հռետոր, այլ առաջնորդում է դեպի վեհ գաղափարներ. մեզ՝ մահկանացուներիս, տանում է անմահության՝ այսրաշխարհից ուղեկցելով դեպի անդրաշխարհ» (Ս. Հուստինոս Վկա):

«Ոչինչ այնպես չի սնում հոգին եւ զորացնում միտքը, որքան Ս. Գրքի ընթերցանությունը: Դուք դրանից առավելագույն օգուտ կստանաք. կլինեք հաստատակամ, ազնիվ, բարեպաշտ, Քրիստոսի սիրով կկատարեք ձեր պարտականությունները եւ անցողիկն ավելի գործ կհամարեք, քան ամենայն մարդկային միտք ու հասկացություն գերազանցող՝ խոստացված հավիտենական բարիքները» (Ս. Թեոն):

«Զգիտեմ՝ արդյոք կարո՞ղ է նորոգվել միտքն այն մարդու, ով անտարբեր է Ս. Գրքի եւ հոգեւոր գիտության մեջ վարժվելու նկատմամբ: Եթե նույնիսկ այս վարժանքի միջոցով չնորոգվի այս միտքը, որն այստեղ իր գիտական ճանաչողության սահմանների ընդլայնում է փնտրում, ապա, համենայն դեպս, կնորոգվի այն միտքը, որն առաջնորդում է մեզ դեպի ազնվություն, մարդասիրություն, հավատ եւ կայունություն... Ով այսպես չի նորոգում իր միտքը, նա մոլորված է եւ խաբված» (Որոգինես Ալեքսանդրացի):

«Այնժամ, երբ միքը գրված է, աղոթքից առավել անձնատո՛ւր եղիր ընթերցանությանը, քանզի Սուրբ Գրքի ընթերցանությունը անաղարտ աղոթքի աղբյուրն է:

Եթե անգամ կարճ ժամանակով ընդհատվի ընթերցանությունը, մարդը կբռնվի կրքերով» (Ս. Իսահակ Ասորի):

«Լույս են սրբազան Գրքերը՝ Աստծուց մեզ պարգեւված, եւ լույսի ցոլքեր են արձակում մեր մտքերում ու լուսավորում՝ գրվածքների միջոցով տեսնելու հոգեղենը» (Ս. Դիոնեսիոս Արիսպագացի):

«Աստծու խոսքը լույս է եւ հուր, քանզի սրբագործում է բնական մտքերը եւ այրում անբնականները, ինչպես նաեւ փարատում է նրանց զգայական կյանքի խավարը, ովքեր պատվիրանապահությամբ ձգտում են բաղձալի լավագույն կյանքին, եւ դատաստանի ու դատապարտության հրով պատժում է նրանց, ովքեր ինքնահաճ կերպով, մարմնի սիրուն կառչում են (զգայական) կյանքի այդ խավար գիշերին» (Ս. Մաքսիմ Խոստովանող):

«Ինչպես որ աստղերի փայլփլող բույլն է լուսավորում երկինքը, այդպես էլ աստվածային խոսքերի ճշմարտությունն է լուսավորում մարդու ներսում դրված ճրագի պես: Ուստի բոլորս էլ կրենք ճշմարտության միեւնույն պատկերը, քանզի Տերը համախոհներին է տանը բնակեցնում» (Ս. Նեղոս Սինայեցի):

*Շարունակելի*

*Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ*

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ



# Տիգրան II Մեծի գահակալությունը

*Սկիզբը՝ էջ 3*

Ք. ծ. ա. 88 թ. Միհրդատ Պոնտացին իրեն այնքան հզոր էր զգում, որ գրավեց ամբողջ Փոքր Ասիան, եւ նույնիսկ պոնտական զորքերը, նրա որդի Արիարաթի գլխավորությամբ, անցան Բալկաններ եւ նվաճեցին Թրակիան ու Մակեդոնիայի մի մասը: Այս կռիվներին պոնտական զորքերի կազմում մասնակցել են Փոքր Հայքի զորագնդերը:

Հռոմը հակահարձակման անցավ եւ Սուլլայի գլխավորած լեգեոնները հաղթանակ տարան, որի արդյունքում, Ք. ծ. ա. 84 թ. կայացած Դարդանոսի պայմանագրի համաձայն, Միհրդատը հրաժարվեց բոլոր նվաճումներից եւ պարտավորվեց մեծ ռազմատուգանք վճարել, ինչպես նաեւ հռոմեացիներին հանձնել սեւծովյան նավահանգիստներում գտնվող 75 ռազմանավ: Ք. ծ. ա. 88-85 թթ. միհրդատյան առաջին պատերազմին Մեծ Հայքի թագավորությունը չի մասնակցել: Թեեւ այդ պատերազմի ընթացքն անհաջող էր Միհրդատ Պոնտացու համար, սակայն նա պահպանեց իր թագավորությունը, իսկ դա կարեւոր էր Տիգրան Մեծի համար, քանի որ դրանով իսկ խոչընդոտված էր Հռոմի առաջխաղացումը Հայաստանի սահմանների մոտ: Այսպիսով միաժամանակ ապահովված էր Մեծ Հայքի թագավորության սահմանների անվտանգությունն արեւմուտքից:

Տարածելով իր ազդեցությունը Վիրքի եւ Աղվանքի վրա՝ Տիգրան Մեծն ապահովեց Հայոց թագավորության նաեւ հյուսիսային սահմանի անվտանգությունը: Այս ժամանակաշրջանում Տիգրան Մեծի տերության ռազմական հզորության մասին վկայում է Մովսես Խորենացին: Միահյուսելով Տիգրան Երվանդյանի եւ Տիգրան Մեծի կերպարները (երկուսն էլ Հայկազունի էին), ինչպես նաեւ առաջինի պայքարը Մարաց եւ երկրորդի պայքարը պարթեւական թագավորությունների դեմ՝ պատմահայրը գրել է. «Հայոց թագավորը զորք է ժողովում՝ Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրները, Կապադովկիայի սահմաններից, Վրաց եւ Աղվանից ընտիրները, որքան որ կային...»՝ իր ռազմավարական ուշադրությունը կենտրոնացնելով հարավային ուղղության վրա՝ Պարթեւական թագավորության դեմ:

Պարթեւ Արշակունիներն իրենց հերթին հայտնվել էին ներքին քաղաքական բարդությունների առջեւ: Պարթեւական թագավոր Միհրդատ II-ի մահվանից հետո երկրում խառնակություններ էին բռնկվել: Տիգրան Մեծը, ռազմավարական տեսանկյունից ճիշտ օգտագործելով պահը, Ք. ծ. ա. 86-84 թթ. հաղթական կռիվներ մղեց պարթեւների դեմ ու նրանց պարտության մատնեց: Հայկական հեծելազորն ազատագրեց Հայոց Միջագետքը՝ Արվաստան-Միգդոնիայի (կենտրոնը Մծբին), ինչպես նաեւ՝ Ուռհա-Եդեսիայի ընդգրկմամբ:

Հայոց Միջագետքը ռազմավարական կարեւոր դիրք ուներ Հյուսիսային Միջագետքում, ուստի Տիգրան Մեծն այդ տարածաշրջանի կառավարումը հանձնեց իր եղբորը՝ Գուրասին: Հույն աշխարհագետ Ստրաբոնի (Ք. ծ. ա 64- Ք. ծ. 23 թթ.) հաղորդման համաձայն՝ Տիգրան Մեծը պարթեւներից ոչ միայն ետ վերցրեց նրանց թագավոր Միհրդատ II-ի օրոք իբրեւ փրկանք տրված հայկական «Յոթանասուն հովիտներ» կոչվող շրջանները, այլեւ իրեն ենթարկեց Նինվեի եւ Արբելայի մոտ գտնվող շրջանները, այսինքն՝ Ադիաբենեն, այնուհետեւ՝ Ատրպատականը, ինչպես նաեւ Միջագետքի մնացած մասը: Համաձայն Իսիդոր Քարակացու (Ք. ծ. ա. I դ.)՝ Տիգրանը վերցրեց Էկբատանը եւ հարեւան տարածքները: Պարթեւական թագավորության դեմ տարած հաղթանակից հետո Տիգրան Մեծն ընդունեց «արքայից արքա» տիտղոսը եւ իր հայացքն ուղղեց դեպի հարավ-արեւմուտք՝ Մերձավոր Արեւելքի երկրների ուղղությամբ:

*Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

